համար։ Կովկասագիտական ուժերի համախմբվածությունը և համաձայնեցված, համատեղ աշխատանքը անհրաժեշտ պայման է սովետական գիտության առջև ծառացած կովկասագիտական շատ հարցերի հաջող և ճիշտ լուծման համար։

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԴՈՆԲԱՑ ՆԻՍՏԸ, ՆՎԻՐՎԱԾ 5—6-ՐԴ ԴԱՐԵՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆԸ ՍՈՎԵՏԱՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1945 թվականի հունվարի 26-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմության Ինստիտուտի գիտական խորհրդի դոնբաց նիստը։ Լսվեց պրոֆեսոր-դոկտոր Աշոտ Աբրահամյանի զեկուցումը «5—6-րդ դարերի ազատագրական շարժումները սովետահայ պատմագրության մեջ» թեմայով։

Սովետական պատմագրության ամենակարևոր հարցերից մեկը համարելով անցյալի ազատագրական շարժումների ճիշտ գնահատումը, զեկուցողը նշեց, որ այդ խնդրի ճիշտ կատարումը պահանջում է առանձնահատուկ ուշադրություն, պատմական դեպքերի ծանոթություն ու հմտություն, դրանք մարքսիստական մեթոդոլոգիայով ներկայացնելու կարողություն։

Ազատագրական շարժումների պատմությունը սկսվում է հնագույն շրջանից։ Այդ շարժումների բնութագրումով զբաղվել են ինչպես կղերա-ֆեոդալական, բուրժուական,այնպես էլ սովետական պատմագիրները։ Կղերական, բուրժուական պատմագրությունը անցյալի ազատագրական շարժումները մեկնաբանելիս, սովորաբար դրանք դիտել է որպես համահայկական ընդհանուր շարժումներ, ընդդեմ օտարերկրյա նվաճողների։ Հայ հասարակությունը դիտվել է որպես մի ամբողջություն։ Վարդանանց պատերազմի մասին խոսող բուրժուական պատմագիրները պատերազմին մասնակցողներին ներկայացրել են որպես մի ընտանիքի պատկանող մարդկանց, իսկ շարժումը ղեկավարողներին՝ ընտանիքի հայրերի։

Դժբախտաբար սովետական պատմագրության մեջ ևս որոշ մարդկանց կողմից կրկնվել է այս սխալը, ինչպես, օրինակ՝ Հ. Մուրադյանի «Վարդան Մամիկոնյան» գրքույկում, որտեղ կա միայն հայ ժողովուրդ, իսկ Վարդանը ծառայում է այդ ժողովրդին։

Մյուս կողմից սխալ է գնահատվել պատերազմի բնույթը։ Կղերական պատմագրությունը կրոնական է համարել Վարդանանց պատերազմը, Լեոն՝ նախարարական։ Լեոյի մոտ, օրինակ, այդ պայքարով ոգեորված ժողովուրդը, որը պատերազմի ամբողջ ծանրությունը կրեց իր ուսերի վրա, չի երևում, կա խառնիճաղանճ մի մասսա։ Նա Հայաստանում տեսնում է Վարդանանց և Վասակյանց կուսակցություններ։

Նույնը նկատվում է նաև գեղարվեստական գրականության մեջ, որտեղ այդ ամբողջ շարժումը կոչվել է Վարդանանց շարժում, մի տրադիցիա, որը շարունակվել է մինչև մեր օրերը («Վարդանանք»)։

Այստեղից էլ՝ Մամիկոնյան ֆեոդալական տան գերագնահատումը. այս բանը որոշակի կերպով դսևորված է հատկապես ընկ. Հ. Հարությունյանի «Վարդանանց պատերազմը» աշխատության մեջ։

Ընկ. Հարությունյանի մոտ Մամիկոնյանները ներկայացվում են իբրև հայրենասերներ, ազնիվ, անշահախնդիր մարդիկ, որոնց միակ հոգսն է ծառայել ժողովրդին, օգտակար լինել նրան։ Ընկ. Հարությունյանը չի տեսնում այդ նախարարության հակաժողովրդական արարքները, այն խոր պայքարը, որ մղվել է աշխատավոր ժողովրդի և նախարարությունների, այդ թվում նաև Մամիկոնյան նախարարության դեմ։

Մյուս կարևոր հարցը, որ վրիպել է շատ սովետական պատմաբանների ուշադրությունից, 5—6-րդ դարերի ազատագրական շարժումները հարևան ժողովուրդների նույնանման շարժումներից անկախ ներկայացնելն է, որ գիտակցաբար կատարել են բուրժուական պատմագետները և նույն ձևով շարունակել են որոշ սովետական պատմաբաններ։

Պատմական իրողություն է սակայն, որ 5-րդ դարի այդ շարժումները սերտորեն կապված են Աղվանքում և Վիրքում ծավալվող շարժումների, Անդրկովկասի մյուս ժողովուրդների շարժումների հետ։ Չպետք է մոռանալ, որ Տիգրան կանչվեցին ոչ միայն հայ իշխանները, այլև վրացի իշխանները։ Ապացուցված փաստ է, որ Կովկասում ապրող հարևան ժողովուրդները միշտ օգնել են միմյանց, և չպետք է թերագնահատել խոր անցյալում նկատվող ժողովուրդների այդ սերտ կապն ու փոխօգնությունը։ Դժբախտաբար մեզ մոտ, եթե

խոսվում է այդ հարցերի մասին, ապա անպայման գերագնահատվում է հայերի դերը։ Օրինակ՝ ընկ. Մուրադյանը այնպես է դուրս բերել, թե Աղվանից աշխարհը անտեր է մնացել, Վարդան Մամիկոնյանը իր հաղթական բանակով օգնության է հասել և փրկել նրան։

Սովետական պատմագրության մեջ սխալ է գնահատվել նաև Ավարայրի ճակատամարտին մասնակցած ժողովրդի դիտավարությունն ու նպատակը։ Այնպես է ներկայացված, թե Վարդանը և յուրայինները համոզված էին իրենց պարտությանը։ Կարծես մի տեսակ ոչխարային տրամադրությամբ է, որ մարդիկ գնացել են կռվելու։ Այդպես չէ, նրանք միայն հավատքի, կամ թեկուզ որևէ սկզբունքի համար գիտակցաբար մահվան գնացող մարդիկ չէին, այլ տոգորված էին հաղթանակի խոր հավատով և կհաղթեին, եթե պատմական հանգամանքները այլ կերպ դասավորվեցին, ուժերի գերակշռություններ թշնամու կողմը չլիներ և եթե չգտնվեին դավաճաններ։

Որոշ պատմաբաններ արդարացնում են Վասակին, հենվելով այն բանի վրա, թե Վասակը սկզբում եղել է հայրենասեր, օգնել է Մեսրոպ Մաշտոցին, թե նրա մարգպետության վերջին շրջանումն է, որ նա դավաճանել է։

Անկախ այն բանից, թե Վասակը իր գործունեության առաջին շրջանում ինչ է արել, փաստն այն է, որ նա վճռական պահին դավաճանել է հայրենիքին, և մեր ժողովուրդը իզուր չէ, որ դավաճանի կնիքը դրոշմել է նրա ճակատին ու սերնդե սերունդ Վասակ անունը դարձել է ուրացողի սիմվոլ։ Վասակին արդարացնողները մեխանիկորեն կրկնում են Ն. Ադոնցի թեզը։

Մյուս հարցը ազատագրական շարժումների և դասակարգային պայքարի փոխհարաբերության հարցն է։ Սովետական պատմաբաններից մի քանիսը՝ խոսելով ազատագրական շարժումների մասին, մոռանում են դասակարգային այն սուր պայքարը, որ գոյություն է ունեցել անցյալի ազատագրական շարժումների ժամանակ։ Դասակարգային պայքարն անտեսվել է, օրինակ, ընկ. Հարությունյանի գրքում, այնինչ Հայաստանում այդ պայքարը շատ ավելի շեշտված ձևով է արտահայտվել, քան որևէ այլ երկրում, որովհետև հայ շինականը այստեղ գտնվել է կրկնակի շահագործման տակ, որի հետևանքն են պավլիկյանների, թոնդրակեցիների շարժումները, որոնց ալիքները հասան մինչ Եվրոպա։

5—6-րդ դարերի ազատագրական շարժումների արդյունքները ամփոփելիս սովետական որոշ պատմաբաններ կրկնում են կղերական, բուրժուական պատմագրության այն սխալ թեզը, թե հայ ժողովուրդը հաղթանակով դուրս եկավ պատերազմից։ Այդ միանգամայն սխալ է։ Պետք է նկատի ունենալ թե ինչ տվեց այդ պատերազմը հայ ժողովրդին, հատկապես աշխատավոր դասակարգին։

Պրոֆ. Ա. Աբրահամյանի զեկուցման առթիվ բացվեց մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին մի շարք պատմաբաններ։

Ընկ. Մորուս Հասրաթյանը հայտնելով իր անբավականությունը զեկուցումից, նշեց, որ ընկ. Աբրահամյանը չկարողացավ բացահայտել այն սկզբունքային ու խոր սխալները, որ կատարվել են սովետահայ պատմագրության մեջ՝ ազատագրական շարժումների գնահատման գործում, և որ ամենից տարօրինակն է, զեկուցողն իր քննադատության օբյեկտ դարձրեց ոչ այնքան սովետահայ պատմագրության մեջ վճռական դեր կատարող կարևոր դեմքերի աշխատությունները, որքան երկրորդական, նույնիսկ պատմագրության հետ բոլորովին առնչություն չունեցող մարդկանց գործերը։ Մյուս կողմից զեկուցողը իր հիմնական թեզերով կրկնեց այն, ինչ որ շարունակ կրկնված է բուրժուական պատմագրության կողմից։ Մեզ թվում էր, որ նա հիմնովին այլ կերպ պետք է կառուցեր իր զեկուցումը։

Այնուհետև ընկ. Հասրաթյանը՝ խոսելով առհասարակ Հայաստանում կատարված շարժումների մասին, նշեց, որ չպետք է ամեն մի ազատագրական շարժում համարվի առաջադիմական։ Ի՞նչպես կարող ենք մենք, օրինակ, ունիթորական շարժումը համարել առաջադիմական։ Այդպես էլ, խոր անցյալում կատարված շատ շարժումներ պետք է քննության տակ դնեն իրենց սոցիալ-տնտեսական ֆոնի վրա, ցույց տրվի նրանց բուն ներքին էությունը, ներքին ու արտաքին քաղաքականության հետ նրա սերտ առնչությունը և ապա միայն եզրակացություններ հանվեն։ Չպետք է հապճեպ, կանխակալ գնահատումներ տալ այդ շարժումներին։ Այնպիսի մի բարդ քաղաքական մթնոլորտում, ինչպիսին տիրում էր պարսկական և բյուզանդական դիպլոմատիաների խաչաձևման կենտրոն հանդիսացող Հայաստանում, մի՞թե չէին կարող որոշ շարժումներ առաջանալ պարսկական կամ բյուզանդական գաղտնի գործակալների հրահրումով, ասենք այնպիսի հրահրումով, ինչպիսին հետագայում ունիթորներն էին ստանում պապից։ Անշուշտ խոսքը չի վերաբերում ոչ պավլիկյան և ոչ էլ թոնդրակեցիների ժողովրդական շարժումներին։ Պետք է մաքրել 1300 տարի առաջ գրվածները պատմության թանձր փոշուց և տեսնել թե որն է ճշմարտությունը, որն է առաջադիմական և որն է հետադիմական։

Ապա խոսելով ընկ. Հ. Հարությունյանի գրքի մասին, ընկ. Հասրաթյանն ասաց, որ Վարդանանց շարժումը ազատագրական էր, ժողովրդական, բայց պատմական ճշմարտություն է, որ 451 թվականի Վարդանանց պատերազմը օգուտ չբերեց հայ ժողովրդին։ Գուցե այլ տակտիկական պայմաններում օգուտ տար, հայ ժողովուրդը հաղթանակող դուրս գար, բայց փաստն այն է, որ կատարվել է հակառակը։ Ընկ. Հարությունյանը միանգամայն սխալ բացատրություն տալով, դուրս է բերել, որ հայ ժողովուրդը հաղթել է այդ պատերազմում։

Ընկ. Բ. Հարությունյանը, խոսելով Վարդանանց պատերազմի մասին, ասաց, որ Վարդանանց շարժումը գերագնահատվել է, հոշակվել համազգային, մոռացության է տրվել նրա դասակարգային էությունը։ Պետք է Վարդանին և Վասակին դիտել որպես ժամանակի ֆեոդալներ։ Դժբախտաբար ընկ. Հ. Հարությունյանը իր գրքում այդպես չէ արել, սրա մոտ Վարդանը նախախնամությունից ուղարկված մի հայրենասեր է։ Հ. Հարությունյանը ամեն կերպ ճգնել է ապացուցել, որ Մամիկոնյանները միշտ եղել են հերոսներ, ժողովրդի պաշտպաններ, թե նրանց երակներում եռացել է Մամիկոնյան արյունը։ Ժառանգականության վրա հիմնված, հակագիտական այս թեզը ոչ մի իրական պատկերացում չի կարող տալ Մամիկոնյան ֆեոդալական տոհմի կատարած հասարակական դերի մասին։ Ընկ. Հ. Հարությունյանի մոտ Մամիկոնյանների իդեալականացումը երբեմն հասնում է գավեշտի։ Թվում է, որ այս իդեալականացումը արդյունք չէ պատահականության, այլ բխում է ընկ. Հ. Հարությունյանի իդեալիստական մոտեցումից պատմական դեպքերին։ Քաղաքականությունը ընդհանրապես չպետք է վերցնել, այլ պետք է նկատի ունենալ կոնկրետ պայմանների մեջ, պետք է այն ուսումնասիրել բազմակողմանիորեն, թափանցել նրա էության մեջ։

Անդրադառնալով 5—6-րդ դարերի ազատագրական շարժումների բնույթին, ընկ. Բ. Հարությունյանը սխալ համարեց Հ. Հարությունյանի այն թեզը, թե շարժմանը մասնակցում էին բոլոր դասակարգերը, հետևաբար համազգային էր։ Վարդանանց ապստամբությունը նախարարական մի շարժում էր։

Շարունակելով իր ելույթը, ընկ. Բ. Հարությունյանը ասաց, որ Նվասարկի ամբողջ դաշնագրի կետերը օգուտ էին միայն ֆեոդալական իշխաններին, ժողովրդի համար այնտեղ չկար ոչինչ, այնտեղ խոսվում էր ավագանիներին իրավունքներ տալու, աստծուն պաշտելու ազատություն տալու և այլ հարցերի մասին։ Ուստի որոշակիորեն շարժումը եղել է ֆեոդալական, այն ղեկավարել են ֆեոդալները, իսկ ժողովուրդը կամովին մասնակցել է նրան իր շահերը զուգակցված տեսնելով ֆեոդալների շահերին, բանի որ աշխատավորությունը ենթարկվում էր կրկնակի հարկի ու ճնշման։ Այստեղ ոչ մի տարօրինակ բան չկա։ Ֆեոդալական շրջանում հնարավոր է որ ժողովուրդը գնա ֆեոդալների հետևից, մանավանդ, երբ նա շահագրգռված է։ Միթե դրանով շարժման բնույթը փոխվում է և դառնում ժողովրդական, ազատագրական։

Ընկ. Ս. Հակոբյանը, անդրադառնալով Վարդանանց պատերազմի սոցիալական նախադրյալներին, նշեց, որ այդ նախադրյալները ամենից լավ ըմբռնել է Եղիշեն։ Պարսկաստանի նպատակն է եղել հեռացնել հայ նախարարներին և պարսիկներին բերել Հայաստան։ Քրիստոնեական եկեղեցին ենթարկվել է հարկի։ Հենց այս երկու փաստերը վկայում են, որ շարժման մեջ հավասարաչափ շահագրգռված էին թե եկեղեցին և թե նախարարները։ Միաժամանակ պատմական իրողություն է, որ պարսիկների այդ ներթափանցումով սահմանափակվում էին շինականի իրավունքները, ծանրանում էր նրա հարկը։ Հարկեր էին վերցնում նույնիսկ ավերակներից, անգամ հգնավորներից։ Այստեղից էլ հասկանալի է, որ իր ուսերին ծանրացող հարկերից ու ճնշումից գեթ մասամբ թեթևանալու համար, նույնքան ոգևորությամբ շարժմանը պետք է մասնակցեր նաև աշխատավոր ժողովուրդը։

Էնգելսը ասել է, որ միջին դարերի բոլոր շարժումները կարող էին առաջ գալ կրոնական բողի տակ, բայց ունենալ սոցիալական բովանդակություն։ Ուրեմն չպետք է խաբվել այն բանից, որ եթե այդ շարժումը նույնպես կատարվել է կրոնական բողի տակ, ապա չունի սոցիալական բազա։

Հայ ժողովուրդը ակտիվորեն մասնակցել է շարժմանը։ Այդ փաստ է։ Հենց դրանով էլ շարժումն ավելի է արժեքավորվում, բայց չպետք է ազատագրական շարժումը շփոթել դասակարգային պայքարի հետ, ազատագրական շարժման մեջ անշուշտ կա դասակարգային պայքար, շարժմանը մասնակցում են տարբեր դասակարգեր, իրենց շահերից ելնելով։ 5-րդ դարի շարժումը ազատագրական էր, քրիստոնեական եկեղեցին կրոնական դույն տվեց նրան, իսկ կղերա-ֆեոդալական պատմագրությունը փորձեց հիմնավորել այդ կարծիքը։ Այդ տարօրինակ չէ, տարօրինակն այն է, որ սովետական պատմաբան ընկ. Բենիամին Հարությունյանը նույնպես, կրկնելով այդ պատմագիրներին, կարծում է, թե Յո-

ղովուրդը կուրորեն է հետևել նախարարներին, ֆեոդալներին, թե շարժումը իր բնույթով կղերաֆեոդալական է։ Այդ կարծիքը միանգամայն սխալ է, շարժումը ժողովրդական է եղել, շարժիչ ուժը՝ ժողովրդական մասսաները, իսկ նպատակը՝ բաղաքական անկախությունը։

Ընկ. Վ. Նալբանդյանը խոսեց Հ. Հարությունյանի «Վարդանանց պատերազմը» գրքի մասին։ Նա նշեց, որ այդ գիրքը ունի նաև արժանիքներ, որոնց մասին պետք է խոսել։ Առաջին անգամ ընկ. Հարությունյանն է փորձել քննադատության ենթարկել Վարդանանց պատերազմի մասին եղած կարծիքները, քննության է առել Մանանդյանի, Գարագաշյանի, Կյուլեսերյանի և ուրիշների կարծիքները։ Այս արժանիքն ունենալով հանդերձ, պետք է նշել, որ «Վարդանանց պատերազմ» գիրքը ունի լուրջ սխալներ։ 451 թվի շարժումը ժողովրդական, ազատագրական պատերազմ հայտարարելով հանդերձ, ընկ. Հարությունյանը չի կարողացել բացահայտել, թե այդ շարժման մեջ յուրաքանչյուր դասակարգ ինչ շահ է ունեցել։ Չի կարողացել բացահայտել հատկապես եկեղեցու և նախարարության դերը։ Անցյալի կղերա-ֆեոդալական պատմագիրները մեր ժողովրդին շատ ավելի կրոնամոլ են դուրս բերել, քան նա եղել է, Պետք է պատմական փաստերով ցույց տալ, որ հայ ժողովուրդն այդ պատերազմին մասնակցել է ոչ այնքան կրոնական զգացմունքներից թելադրված, որքան տնտեսական, բաղաքական նպատակներով։

Ընկ. Լ. Բաբայանի ելույթը ամբողջությունն նվիրված էր Հ. Հարությունյանի «Վարդանանց պատերազմը» գրքին։ Նա ասաց, որ «Վարդանանց պատերազմը» գիրքը կարծես լինի իշխանների և զորավարների պատմություն։ Այնտեղ չկա ժողովրդի պատմություն։ Այդ գրքում պատմության առանցքը անհատն է, շարժիչ ուժը՝ հերոսները, իսկ այդ հերոսները Մամիկոնյաններն են, որոնց կուրորեն հետևում է ժողովուրդը։

Հ. Հարությունյանի մոտ բոլոր հերոսները, Մամիկոնյանները կուլտուրական են, զարգացած, ժողովրդի շահերի պաշտպան։ Նույնիսկ թագավորները միայն բարիք են կատարում ժողովրդին։ Պապը ժողովրդին բերում է անկախություն և երջանկություն։ Ընկ. Հ. Հարությունյանի մոտ հայ ժողովրդի անկախության պահպանումը բացառապես կապված է եկեղեցու հետ։ Նրա գրքում չկա դասակարգային պայքար։

Ապա ելույթ ունեցավ ընկ. Հ. Հարությունյանը։ Նա՝ ընդունելով հանդերձ, որ իր գրքում կան սխալներ, փորձեց այդ սխալներին տալ ավելի երկրորդական նշանակություն և ապացուցել, որ հիմնական հարցերն իր մոտ լուսաբանված են ճիշտ։ Նորից պնդեց Մամիկոնյանների կատարած բացառիկ դերի վրա և ասաց, որ Վարդան Մամիկոնյանը, Թեոդորոս Ռշտունին և ուրիշները եղել են մեծ զորավարներ, աստղեր իրենց Լպոխայում։

Ապա, փորձելով հանրագումարի բերել իր թույլ տված սխալները, ընկ. Հ. Հարությունյանը այդ սխալներից ամենահիմնականը համարեց 5-րդ դարը ոսկեդար համարելը, այդ դարի դրականությունն ու կուլտուրան գերագնահատելը։

Անդրադառնալով իր գրքում դասակարգային պայքարի անտեսմանը, Հ. Հարությունյանը փորձեց արդարացնել այն բանով, որ պատմագիրների մոտ քիչ տվյալներ են եղել այդ մասին։

Ամփոփելով Գիտական խորհրդի աշխատանքները, Պատմության Ինստիտուտի դիրեկտոր ընկ. Ա. Հովհաննիսյանը նշեց, որ քննարկման տրված հարցը շատ ավելի լուրջ, սկզբունքային էր, քան այդ պատկերացրին թե զեկուցողը և թե ելույթ ունեցողներից մի բանիսը։ Այդ էր պատճառը, որ քննարկվող հարցերը չստացան սպասված մեկնաբանություն։ Չնայած դրան, Գիտական խորհրդի նիստը ունեցավ իր օգուտը, բացահայտվեցին բազմաթիվ կարևոր հարցեր և գնահատում ստացան մի շարք դրույթներ։

Անդրադառնալով ընկ. Հ. Հարությունյանի ելույթին, ընկ. Հովհաննիսյանը նշեց, որ ընկ. Հարությունյանը փորձեց արդարացնել իր մի շարք սխալ թեզերը, որոնց, ինչպես նաև սովետահայ պատմագրության մեջ նկատվող այլ թերությունների բազմակողմանի և լուրջ քննադատությունը, դրանց ուղղումը հանդիսանում են պատմության ֆրոնտի աշխատողների առաջնահերթ խնդիրները։

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ